Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ՝ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Հարություն Սարգսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ

3. *Գործուղման վայրը և ժամկետները*

Իտալիայի Հանրապետություն, ք. Հռոմ, 5-ից 9-ը մայիսի, 2025 թվական

4. Հրավիրող կողմը

Երկրի հեռազննման խմբի քարտուղարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Իտալիայի տիեզերական գործակալության և Երկրի հեռազննման խմբի (ԵՀԽ) հետ համատեղ կազմակերպված «The Earth Talks» խորագրով համընդհանուր համաժողովին, ինչպես նաև ԵՀԽ կառավարման խորհրդի և անդամ պետությունների Նախարարական հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները

- 2026-2030թթ. ռազմավարության պլանը,
- ԵՀԽ գիտական ծրագրերը,
- 2024 թվականի ֆինանսական հաշվետվությունը,
- 2026 թվականի ֆինանսական բյուջեն,
- ԵՀԽ 2026 թվականի համաժողովի անցկացման վայրը,
- այլ ընթացիկ հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

ԵՀԽ-ն շրջակա միջավայրի համամոլորակային հիմնախնդիրների (կլիմայի փոփոխություն, աղետներ, անապատացում, կենսաբազմազանության ոչնչացում և այլն) ուսումնասիրման նպատակով օդատիեզերական հեռազննման արդյունքների օպտիմիզացման և կիրառողների պահանջների արդյունավետ բավարարման միջազգային մեխանիզմի ստեղծմանն ուղղված համաշխարհային

նախաձեռնություն է, որի հիմնադրման հոբելյանական 20-րդ համաժողովն ընդգրկում էր նաև անդամ երկրների նախարարների մասնակցություն: Համաժողովի ընթացքում ելույթներ են ունեցել գիտական խմբեր, որոնք ներկայացրել են նախորդ տարիների արդյունքները: Նախարարական կլոր սեղան քննարկմանը քննարկվել է «Earth Intelligence for One Health» և «Earth Intelligence for Disaster Risk Reduction» թեմաները, որոնք վարում էին Մմբոնենի Մուոֆեն (Հարավային Աֆրիկայի գիտության, տեխնոլոգիաների և նորարարության վարչության տեխնոլոգիական նորարարության կենտրոնի տնօրենի տեղակալ) և Ֆաուստո Գուզետին (Իտալիայի ազգային հետազոտական խորհուրդ):

Համաժողովին զուգահեռ ընթանում էր տարբեր երկրների (Իտալիա, Չինաստան, Ճապոնիա, Կորեա, ԵՄ, ԱՄՆ և այլն) տիեզերական կազմակերպությունների և գործակալությունների երկրի հեռազննման ուղղությամբ իրականացրած աշխատանքների գիտական և հասարակական արդյունքների, կարողությունների, հեռանկարների և համագործակցության հնարավորությունների ցուցադրություն:

Համաժողովի առաջին օրը պաշտոնական ողջույնին հաջորդեց երկրի հեռազննման տաղավարների բացման արարողությունը: Ցուցադրված էին տիեզերական, ինչպես նաև համագործակցող գիտական գործակալությունների և կազմակերպությունների աշխատանքները երկրի տեսազննման ուղղությամբ: Միաժամանակ ԵՀԽ-ի կողմից ֆինանսավորվող գիտական ընկերությունները ներկայացնում էին իրենց գիտական աշխատանքները և հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակված շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ հայեցակարգերն ու ռազմավարական պլանները:

Համաժողովի երկրորդ օրը նախատեսված էր ԵՀԽ կառավարման խորհրդի հանդիպումը: 2015 թվականից Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է ԵՀԽ գործադիր կոմիտեի անդամ պետություն և ԵՀԽ կառավարման խորհրդի կողմից կայացվող որոշումներում ունի որոշիչ դեր: Կառավարման խորհրդի հանդիպման ընթացքում ԵՀԽ քարտուղարությունը ներկայացրեց նախորդ տարվա աշխատանքների արդյունքները և ֆինանսական հաշվետվությունը: Քննարկվեց և հաստատվեց հաջորդ տարվա ֆինանսական բյուջեն: Քարտուղարությունը ներկայացրեց 2026 թվականի համաժողովի անցկացման հայտերը՝ Քենիայի

Հանրապետությունից և Շվեյցարիայի Համադաշնությունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2026 թվականին Քենիայի Հանրապետությունում անցկացվելու են մի շարք բնապահպանական և երկրի հեռազննման համաժողովներ, որոնք կազմակերպվում են երկրի նախագահի բարձր հովանու ներքո, որոշվեց հաջորդ տարվա համաժողովն անցկացնել Քենիայում: Քննարկվեցին նաև այլ ընթացիկ հարցեր:

Կառավարման խորհրդի նիստի ժամանակ ներկայացրել եմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող շրջակա միջավայրի, երկրի հեռազննման, կլիմայի փոփոխության ուղղությամբ ֆինասավորվող թեմաները և ֆինանսավորման ծավալները: Հայտնել եմ նաև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի պատրաստակամությունը անդամակցելու երկրի հեռազննման գիտական կոնսորցիումներին և աջակցելու ՀՀ գիտական կազմակերպություններին միջազգային համագործակցություններն ընդլայնելու ուղղությամբ:

Նախարարական համաժողովը տեղի ունեցավ մայիսի 7-ին: Վերջինիս մասնակցում էին անդամ պետությունների գիտության և տեխնոլոգիաների, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության, տիեզերական գործակալությունների բարձրաստիճան պաշտոնյաներ և ներկայացուցիչներ: Ողջույնի խոսքով հանդես եկան Իտալիայի համալսարանների և հետազոտությունների նախարար Աննա Մարիա Բերնինին, Իտալիայի տիեզերագնացության գործակալության նախագահ Թեոդոր Վալենտեն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների նախարարության փոխնախարար Ջիաչանգ Չենը: Համաժողովին զեկույցներով հանդես եկան Արաբական Միացյալ Էմիրությունների կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նախարարը և Հարավային Աֆրիկայի բարձրագույն կրթության, գիտության և տեխնոլոգիաների նախարարը:

Հանդիպման ժամանակ ներկայացվեց և քննարկվեց ԵՀԽ 2026-2030 թվականների ռազմավարական պլանը, ԵՀԽ հետագա աշխատանքների ծրագիրը և անդամակցության համար ներկայացրած նոր հայտերը:

Հայաստանում հեռազննման տեխնոլոգիաների մեթոդական մշակումներին և դրանց կիրառմանն ուղղված գիտակրթական նախաձեռնությունների վերաբերյալ ներկայացվել է զեկույց:

ԵՀԽ գլխավոր քարտուղար Յանա Գևորգյանի հետ քննարկվել են ԵՀԽ առաջատար նախաձեռնությունները, մասնավորապես Համաշխարհային Էկոհամակարգերի Ատլասում (Global Ecosystems Atlas) Հայաստանի ներառման և 2026 թվականի Հայաստանում ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովին (COP17) արդյունքների ներկայացման հնարավորությունները:

Հանդիպման ժամանակ բարձրաձայնվեց Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությունը երկրի հեռազննման և կլիմայի փոփոխության գիտական թեմաներին, ինչպես նաև պատրաստակամությունը համագործակցելու միջազգային կառույցների հետ վերոնշյալ գիտական ոլորտներում համագործակցության զարգացման ուղղությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հաստատվել է ԵՀԽ ռազմավարական ծրագիրը, որը հաստատում է Երկրի հեռազննման/դիտարկման ոլորտում արհեստական բանականության արդի մշակումների ներդրման խթանումը և այդ ուղղությամբ միջազգային համագործակցության զարգացումը: Ավելին, ԵՄ շրջանակային ծրագրերի մրցույթներում շարունակելու են խրախուսվել այս ուղղության զարգացմանն ուղղված գիտական մրցույթները:

Համաժողովի ընթացքում տարբեր երկրների գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում հայտնել եմ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի պատրաստակամությունը աջակցելու և նպաստելու.

- Երկրի դիտարկման տեխնոլոգիաների և գիտամեթոդական մշակումների զարգացմանը, ինչպես նաև գիտական կազմակերպությունների և խմբերի միջև համագործակցությանը,
- ԵՀԽ առաջատար նախաձեռնություններին, ինչպիսիք են Համաշխարհային Էկոհամակարգերի Ատլասը (Global Ecosystem Atlas) և այլն,

- ՀՀ գիտական կազմակերպությունների շրջանում Հայաստանում 2026 թվականին ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի ընթացքում (COP17) ԵՀԽ գործունեության լուսաբանմանը,
- ԵՀԽ թեմատիկ ուղղություններով գիտական համագործակցության ակտիվացմանը:

Քննարկվել է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ, ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի նախաձեռնությամբ և ԵՀԽ գլխավոր քարտուղար Յանա Գևորգյանի անմիջական մասնակցությամբ Հայաստանում ԵՀԽ գործունեության տեղեկատվական օրվա կազմակերպման հնարավորությունը, որին ակնկալվում է շահագրգիռ գերատեսչությունների, գիտական կազմակերպությունների մասնակցությունը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Անցկացված միջոցառումն ուղղված էր կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության ոչնչացման, հողերի անապատացման, աղետների ուսումնասիրության միջազգային մեխանիզմի ստեղծմանը՝ օդատիեզերական հեռազննման արդյունքների օպտիմիզացմամբ:

Ձեռք են բերվել գիտական միջազգային համագործակցության խթանմանն ուղղված մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես Աթենքի ազգային դիտակայանի ղեկավարության՝ Եվանգելոս Գերասոպուլոսի, Իտալիայի Տուշայի համալսարանի ներկայացուցիչներ՝ Ելենա Բրունորիի և Մաուրո Մաեսանոյի հետ Հորիզոն Եվրոպա մրցույթային ծրագրերին համատեղ մասնակցության վերաբերյալ:

Քանի որ ԵՀԽ-ի գործունեության շրջանակը ներառում է տարբեր ոլորտներ՝ գիտություն, բարձր տեխնոլոգիաներ, գյուղատնտեսություն, շրջակա միջավայր, ԵՀԽ աշխատանքներին ակտիվ մասնակցության, անդամակցող միջազգային կառույցների հետ համագործակցության ակտիվացման նպատակով նպատակահարմար է ստեղծել աշխանքային խումբ ոլորտի շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ընդգրկելով նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Էկոլոգանոոսֆերային

հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն Շուշանիկ Ասմարյանին՝ որպես ՀՀ-ում ԵՀԽ աշխատանքների համակարգող: Աշխատանքային խմբի անդամները հնարավորություն կունենան իրազեկված լինելու ԵՀԽ-ի աշխատանքների ընթացքից, իսկ անհրաժեշտության դեպքում կհայտնեն համապատասխան գերատեսչությունների դիրքորոշումը: Այս առաջարկությունը զեկուցվել է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին՝ հետագա քննարկումների համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Հարություն Սարգսյան
14.05.2025թ.